

Յետ այսր եպիսկոպոսապետն օծանէ օրհնեալ ձիթով զգլուխ նորա եւ զկուրծսն եւ զթիկունսն եւ զերկուս բագուկսն խաչանման. եւ ասէ զայս. «Օծանեմ զքեզ, թագաւոր, սուրբ իւղովս, յանուն Հօր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն. ամէն»: Եպիսկոպոսն ասէ. Խաղաղութիւն ընդ քեզ: Ժողովն. Եւ ընդ հոգւոյդ քում: Օծանէ զափսն եւ ասէ. «Օծանեմ զձեռս քո՝ սուրբ իւղովս, որով օծան թագաւորք եւ մարգարէք. որով օծ Սամուէլ զԴաւիթ թագաւոր. զի այսու օրհնեալ լիցիս եւ հաստատեալ արքայ՝ ի վերայ ժողովրդեանս՝ զոր Աստուած ետ ՚ի ձեռս քո՝ հովուել, ՚ի փառս Հօր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն»: Եւ ասէ զաղօթս. «Քո է Աստուած, ամենայն զօրութիւն, եւ դու եւ որ փառաւորես զթագաւորս», եւ այլն:

Ապա առնուն զնա երկու եպիսկոպոսք եւ այլ սարկաւազք եւ տանին ՚ի սարկաւազարանն. եւ զգեցուցանեն նմա երախ կտաւի հանդերձ՝ որպէս երիցու. եւ ապա մետաքս կարմիր՝ փոքր սարկաւազի, եւ ՚ի վերայ՝ սարկաւազի նոյնպէս կարմիր, պատուական պաւլովն⁸⁸, լայնթեզանի եւ գօտելոյձ. եւ նախ զմիւռնոն զգուշութեամբ՝ հացի միջով (սրբէն). եւ ածեն զզուրն ՚ի սուրբ տեղի. ապա յետ զգենւոյն՝ առնուն զձեռանէ, եւ խաչ առաջի սեղանոյն: Եւ ասէ եպիսկոպոսապետն զօրհնութիւնս եւ զորս զկնի՝ ՚ի վերայ արքային.

«Շնորհք Սուրբ Հոգւոյն իջցէ ՚ի վերայ քո առատապէս՝ այսու օրհնութեամբս. եւ ըստ որում մէք անարժանքս կնքեցաք զքեզ սուրբ օծութեամբս, լիցիս եւ ՚ի ներքոյ օծեալ օրհնութեամբ հոգեւորաւ, եւ պարարեցիս ներգործութեամբ շնորհաց Սուրբ Հոգւոյն. զի սրբեցիս յամենայն չարէ, եւ մնացես ՚ի բարի. թօթափեցիս յանիրաւութենէ, եւ գործեցես զիրաւունս. խտորեցիս ՚ի չարէ, եւ արասցես զբարի. յնորեցես զխաղաղութիւն սուրբ եկեղեցւոյ, եւ երթիցես զհետ սորին ուղիդ հաւատոյ. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք». եւ այլն:

Այլ աղօթք. «Աստուած, զոր զարդարս փառաւորես», եւ այլն:

Յետ այսր առնուն եպիսկոպոսքն զՍուրն վաղակաւոր՝ որով հանդերձեալ է կալ յիշխանութիւն ժողովոյ, եւ ասեն.

«Ընկալ զՍուրս զայս՝ ՚ի ձեռանէ առաքելական աստիճանի՝ անարժան եպիսկոպոսացս, եւ սովաւ թագաւորեցես ՚ի փրկութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ժողովրդեանս, որ ընդ ձեռամբ քո հովուին. զոր Դաւիթ ՚ի Սաղմոսին երգէ՝ յիշեա՛, Ա՛ճ զսուր ընդ մէջ քո, հզօր եւ թագաւորեա այսու ճշմարտութեամբ. եւ

⁸⁸ Թուի օթոցն այն կամ վերարկու, զոր Լատինացիք կոչեն պէսպէս յեղեղմամբ անուանն՝ Paula, Palla, եւս եւ Pallium: